ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՅԻԿ ԶԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 14 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Վեճի առարկա նորմի իրավակիրառական պրակտիկան լրացուցիչ ուսումնասիրելու, դատավորների գործուղման հիմնավորումները պարզելու, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 14, 24, 33, 122, 127, 129, 134, 135, 142, 147 և 169 հոդվածների իրավակարգավորման համակարգային փոխառնչությունները լրացուցիչ հետազոտելու նպատակով ՀՀ սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 56 հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերի հիմքերով գործի վարույթը կասեցնել:

2. Հանձնարարել գործով զեկուցողին՝ ՀՀ վճռաբեկ դատարանից պահանջել.

ա/ վերջին մեկ տարվա ընթացքում ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի հիմքերով դատավորների գործուղումների անհրաժեշտության վերաբերյալ հետևյալ գրությունների պատճենները.

- Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի 2008թ. փետրվարի 29-ի թիվ ԿԴ23-55/08,
- Հարավային քրեական դատարանի նախագահի 2008թ. փետրվարի 5-ի թիվ Ե-03,
- Հարավային քրեական դատարանի նախագահի 2008թ. մարտի 12-ի թիվ Ե-93,
- Հյուսիսային քրեական դատարանի նախագահի 2008թ. ապրիլի 15-ի թիվ Ե-165,
- Հյուսիսային քրեական դատարանի նախագահի 2008թ. ապրիլի 28-ի թիվ Ե-204,
- Հյուսիսային քրեական դատարանի նախագահի 2008թ. հունիսի 11-ի թիվ ԴԴ-14/Ե-368,
- Հյուսիսային քրեական դատարանի նախագահի 2008թ. Հուլիսի 14-ի թիվ ԴԴ-15-Ե-289/08,
- Հյուսիսային քրեական դատարանի նախագահի 2008թ. հուլիսի 31-ի թիվ ԴԴ-14/Ե-647,
- Հյուսիսային քրեական դատարանի նախագահի 2008թ. օգոստոսի 2-ի թիվ ԴԴ-14/Ե-723,
- Հյուսիսային քրեական դատարանի նախագահի 2008թ. սեպտեմբերի 11-ի թիվ ԴԴ-14/Ե-782,

բ/ տեղեկատվություն՝ 2008թ. անցած ամիսներին Հյուսիսային քրեական դատարան և Հարավային քրեական դատարան մուտքագրված և քննված գործերի քանակի մասին՝ ըստ ամիսների,

գ/ տեղեկատվություն՝ նշված քրեական դատարանների սպասարկման դատական տարածքներում 2007թ. նույն ժամանակահատվածում ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով դատարաններ մուտքագրված գործերի քանակի վերաբերյալ։

3. ՀՀ ՍԴ աշխատակազմին՝ սույն որոշման և ստացված նյութերի օրինակները տրամադրել կողմերին՝ լրացուցիչ գրավոր բացատրություններ ներկայացնելու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 նոյեմբերի 2008 թվականի
ՍԴԱՈ-90